

Չեմ երկարեք ա՛յլ եւս, եւ բաւ կը համարիմ ըսել՝ թէ Ս. Խաչի վարժարանը եղաւ մեծահամբաւ՝ ձեւաբանի հետ զուգընթացաբար, եւ նաեւ անոր մրցակից-ուսումնակիցը, որովհետեւ գրեթէ միեւնոյն դասատուներն էին, որ կը պաշտօնավարէին երկու Դպրոցներուն մէջ եւ բոլոր աշակերտներուն միջեւ կը մշակէին ուսումնասիրութեան եւ եղբայրական յարաբերութեան ջերմ եռանդը:

1872ին վարժարանին աջ կողմը գտնուած ընդարձակ պարտէզին մէջ շինուեցաւ լայն սրահ մը թատրոնածէս, ուր ցորեկեայ բանաստեղծներ ըրած են մեծանուն Փրանսա-խօսութիւններ ըրած են մեծանուն Փրանսա-դէս-գրագէտ Յակոբ Ոսկան, Օրագիր թերթին խմբագիր՝ Օգոսէն Խօստարեան եւ Մանգուսէի խմբագիր Կարապետ Փանոսեան, եւ ուր՝ երբեմն ալ կը տրուէին թատերական յաջող ներկայացումներ, որոնց գլխավորն էր վարդան Մամիկոնեանի թատրերգութիւնը:

* * *

Ս. Խաչի վարժարանը՝ Ս. Կարապետին նման ունեցաւ Սանուց եւ Սանուհեաց ընկերութիւններ, որոնց նպատակն էր հարստացնել Դպրոցին Մատենադարանը: 1878ին հաստատեցինք հոն Ուսումնատարած անուն ընկերութիւն մը եւ Կիրակի օրերը պանդուխտ ազգայիններու հայերէն լեզուի ու հաշուագիտութեան դասեր կու տայինք հոն, եւ ու Սարգիս Սէմէրճեան քաջ Փրանսագէտ ընկերս, ու ներհուն չափազէտ Գրիգոր Զաքարեան: Այս ընկերութեան յաջորդեց 1879ին Կրթասիրաց ընկերութիւնը, որուն գործադիր անդամներէն եղած էի, Բարիզ մեկնելէս առաջ, եւ որ վերահաստատեց լսարանը ու նաեւ ժողովրդային Մատենադարան մը, որուն բացման ճառը ես խօսած եմ¹²³, եւ ուր՝ ցորեկ ու գիշեր տեղի ունեցած են, խիստ շահեկան բանախօսութիւններ: Ասոնցմէ յիշատակելի են Օրմանեան Մաղաքիա վարդապետին «Միութիւն Հայութեան» եւ «Կարօտ եմք» գերբնախր բանախօսութիւնները, զորս կրթասիրաց ընկերութիւնը առանձին առանձին տետրակներու մէջ հրատարակել տուաւ 1879ին:

Եւ այսպէս՝ Սեւմաթիէ ուսման եւ կրթութեան ամենաբերուն անդատան մը եղած է, ուրիշ թաղերու նախանձը շարժելու աստիճան:

¹²³ Հրատարակուած Թէրքիսանը Էֆեֆար թերթի մէջ 1879 Օգոստոս:

Գիւռ չեմ խօսիր վարդանանց տօնի եւ զպրօցական տարեկան քննութիւններու եւ պարզեւարաշխութիւններու մասին, որոնք տեղի կ'ունենային Եկեղեցւոյն մէջ անմասն չուքով, այլ կ'ըսեմ միայն թէ Ս. Խաչ ալ Ս. Կարապետի հետ եղած էր հայկական սքանչելի կեդրոն մը՝ Հայաստանի մը, ուր բացի ազգային երկսեռ վարժարաններէն, ունէր նաեւ իր շուրջը մասնաւոր վարժարաններ, որոնցմէ կը յիշեմ Սիմոն Ֆէլէկեանինը (1874ին) եւ Եղիազար Մուրատեանինը (1871—1872) բայց կարճատեւ եղած ու փակուած խաղաղ:

Ս. Խաչի վարժարանը անցեալ դարու վերջերը իր ծրագրին մէջ ընդունեց կրթական նորագոյն դրութիւն մը, այն էր՝ Ֆրէճուէ-լեան մանկապարտէզի դրութիւնը, որ առաջին անգամ այդ թաղին մէջ ծնունդ կ'առնէր շնորհիւ Տիկին Գայեանէ Մատակեանի:

Այդ ճարտար ու գործունեայ մանկապարտիզանուհին մեծ անուն թողած է Կ. Պոլսոյ մէջ, եւ պատճառ եղած, որ մանկապարտիզեան կրթական դրութիւնը տարածուէր հետզհետէ ու ընդունուէր ուրիշ թաղերու ազգային վարժարաններու Հոգաբարձութիւններէն, փոխան Ծաղկոցեան կոչուած քնարեր եւ անախորժ կրթութեան, որ մատաղ մանուկներու նորընձիւղ մտքին հիւանդացուցիչ պատուհաս մ'էր բառին կատարեալ իմաստով:

Մանկապարտէզը պահած է իր գոյութիւնը, ու փոխադրուած՝ վերեւ յիշածս «Պատրիարքարան» կոչուած պարտիզաւոր ընդարձակ շէնքը, ուր մեծ յառաջադիմութիւն եւ զարգացում ունեցած է երբեմն:

* * *

Ս. Խաչ Եկեղեցւոյն ճիշդ ետեւի արեւելեան փողոցին վրայ կանգուն էր Օտեան Պօզոս Աղայի լայնարձակ տունը, ուր իր որդին մեծանուն Գրիգոր Օտեան՝ Տօքթ. Նահապետ Ռուսինեանի, Նիկողոս Պալեանի գլխավոր գործակցութեամբ երկնած է Աղային Սահմանադրութիւնը եւ Եկեղեցական քանի մը Հայերու եւ աշխարհական ծանօթ ուրիշ անձերու հետ զայն խմբագրած 1860ին:

Օտեանեաց (աւելի «Օտոնեց» կոչուած) այդ բնակարանը՝ ժամանակի ընթացքին փոխակերպեցաւ եւ եղաւ՝ Տայեան գիշերօթիկ վարժարան օրիորդներու: Ասոր ճիշդ քովը կար Նիզամեանի մը մեծամեծ տունը, ուր անմահ Ուսուցչապետ Ռէթէոս Պէրպէրեան

փոխադրեց իւր անուանակիր վարժարանը՝ ցերեկեայ եւ գիշերօթիկ:

Այս բազմադրեւն եւ պանծալի բարձրագոյն վարժարանը, Ռ. Պէրպէրեան՝ նախապէս՝ 1876 Հոկտեմբեր 1ին Գատըգիւղի մէջ բանալէն յետոյ, 1878ին կը փոխադրէր Իւսկիւտար-Սեւմաթիէ, ուր խիստ փառաւոր կերպով՝ 1901ին անոր Գասնեւհինգամեակի Յօրմանեան Մաղաքիա Պատրիարքին եւ այդ առթիւ՝ ես իրրեւ Ատենապետ ազգային ուսումնական խորհուրդին, պատիւ ունեցայ Մեծ Ուսուցչապետին ուղղել ներքողեան մը¹²⁵, նուիրելով իրեն իր լուսանկարը կրող զեղաբուստ շրջանակ մը՝ զոր Կ. Պոլսոյ ուսուցչական ամբողջ խումբը պատրաստել տուաւ ուսումնական խորհուրդին միջոցաւ, եւ որ կը բաղկանար՝ համակ ոսկեղօծ արծաթի բազեղներու սողոսկուն ճիւղերէ, ի նշան անմահութեան կամ յարատեւութեան:

Ս. Խաչի աղջկանց վարժարանի ետեւի փողոցին մէջ՝ Պէրպէրեանի եւ Օտեան տան կարգին վրայ կար նաեւ Հայ-մայրապետ երկու քոյրերու նախակրթարանը, ուր կը յաճախէին փոքրիկ երկսեռ մանուկներ այլ, բէն, գիւմ միայն սորվելու, եւ ասոնց ետեւ ալ՝ 1874ի տեւեմբեր Ամերիկացի Միսիոնարներ հաստատեցին Հօւսֆուլ կոչուած փառաւոր շէնքը¹²⁶ իբրեւ աղջիկներու յատուկ վարժարան, ուր բազմաթիւ Հայ աշակերտուհիներ տարիներով բարձր կրթութիւն առին:

Այս գաղտնի պարտէզին մէջ միաժամանակ շինուեցաւ Հայ բողոքականներու Ժողովարանը, ուր երբեմն ալ գիշերային բանախօսութիւններ տեղի կ'ունենային գլխավոր նիւ-

¹²⁴ Ռ. Պէրպէրեան 1895ի տխուր դէպքերէն յետոյ ընտանիքով դնաց Զուլեյքեա եւ իր այդ բացակայութեանը միջոցին վարժարանը կրնար փակուել ի սպառ, թէք անոր նախկին աշակերտներէն ուսուցիչ Պետրոս Կարապետեան կուրծք չի տար սպանացող վտանգին: Պէրպէրեան զպրօցը մնաց կանգուն եւ երբ շիմ-նագիրը վերագրածու Կ. Պոլիս, մեծ եղաւ իր ուրախութիւնը տեսնելով իր ձեռակերտ կրթարանին անխափան զարգացումը:

Ռ. Պէրպէրեան շարունակեց իր գործը, բայց իւր յեղակարծ մահէն յետոյ, գաւակները վարժարանը փոխադրեցին Գահիթէ, ուր ունեցաւ ծաղկեալ վիճակ, բայց 1934ին փակուեցաւ այն չի կարենալով տոկալ տարիներէ ի վեր տիրող հրատարակի նիւթական անկեր-ջանալի տագնապին:

¹²⁵ Բացի իմ խօսածէս՝ որ հրատարակուեցաւ նոյն տարուայ Համիլէտ Ամսօրեայի մէջ, ուրիշ անձեր արտասանեցին հոգապաշտութիւն, որոնց մէջ նկատելի էին Օրմանեան Սրբազանինը եւ Հ. Գարբէլ Մէնկլի-լեանի գրաբար արտասանութիւնը:

¹²⁶ Յետոյ Ամմաուտէոյի բարձունքը փոխադրուած. վոսփօրի Եւրոպական կողմը:

թերու վրայ: Հոն եւ 1887 Մարտ 25ի գիշերը բանախօսած եմ Մարմնավարձութեան օգուտներուն վրայ:

* * *

Սեւմաթիէ թաղը այսպէս Կ. Պոլսոյ հայաբնակ թաղերուն ամենահարուստն եղաւ գաղտնի տեսակետով, նաեւ ամենաբերեւելի իր բազմահոծ Հայ բնակչութեամբ, որոնց մէջ նկատելի էին՝ Պալեան, Փիշմիշեան, Նորատունկեան, Օտեան, Պէրպէրեան, Փափազեան, Սէֆէրեան, Պէհզաոտ, Ազնաւուրեան եւ այլն եւ այլն ընտանիքները, որոնք ունին հոն իրենց բարեգործութեան անմոռանալի յիշատակները:

(Շարունակելի): ԳԿՏ. ՎԱՀՐԱՄ Յ. ԹՈՐԳՈՄԵԱՆ



G. HOFMANN S. J., Il vicariato Apostolico di Costantinopoli 1453—1830. Documenti, con introduzione. 7 illustrazioni ed indici dei luoghi e delle persone. Roma, Pont. Instit. Orient. Studiorum, 1935, 8°, էջք 336 [Orientalia Christiana Analecta 103]: Գիտն՝ 54 լրէտ:

Գործս կոչուած է արեւելեան եւ մասնաւորապէս հայկական եկեղեցապատմական մութ շրջան մը լուսարանելու, որովհետեւ Կ. Պոլսոյ Առաք. Կառավարչութեան շրջանին մէջ, որ կը տարածուէր ամբողջ Փոքր Ասիոյ՝ մէջն առնելով նաեւ Ախալցխայի նահանգը, Թրակիայի եւ այսօրուան Յունաստանի վրայ, կաթողիկէ հայերն են որ ամէնէն աւելի ակնառու համայնք մը կը ներկայացնեն: Հեղինակն, որ իբրեւ արեւելեան ուսումնասիրող գրադող՝ մասնագէտ մըն է առաջադիր նիւթիս, օգտուած է առատօրէն Վատիկանի եւ ուրիշ զիւաններէն. այս ուղղութեամբ նիւթ հաւաքելու նպատակով 1931ին չորս ամիս պրպտուեցան կատարած է նաեւ Կ. Պոլիս:

Գործիս մեծագոյն մասը կը կազմեն վաւերագրութիւնները, զորոնք կը կանխէ պատմական ակնարկ մը (էջ 11—39) չորս ստորաբաժանումով. Ա. Կ. Պոլսոյ գրաւումէն մինչեւ Կարլովիցի խաղաղութիւնը (1453—1699). Բ. Կարլովիցի խաղաղութիւնէն մինչեւ գաղղ. յեղափոխութիւնը (1699—1789). Գ. Նորագոյն ժամանակները (1789—1830, երբ հայ կաթողիկէ համայնքն իբրեւ կրօնական ու

